

**ПОЛИТИКА**

**Ակնարկ Այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնիի «Վելայատ-ե ֆադիհի» հայեցակարգի շուրջ**

*Փարսյան Շուշաննա Հ.*

*Երևանի պետական համալսարան, Արևելագիտության ֆակուլտետ,  
Իրանագիտության ամբիոն, ասպիրանտ (Երևան, ՀՀ)*

<https://orcid.org/0009-0001-8356-4658>  
[shushanna.galstyan@gmail.com](mailto:shushanna.galstyan@gmail.com)

ՀՏԳ՝ 94(55), 140, 284, 342.3; EDN: ZMXTYX

DOI: 10.58587/18292437-2024.3-9

**Հանգուցաբառեր՝** «Վելայատ-ե ֆադիհի», հայեցակարգ, Խոմեյնի, Իսլամական հեղափոխություն, Իրանի Իսլամական Հանրապետություն, Սահմանադրություն, Իմամաթ, պետական համակարգ

**Обзор концепции Аятоллы Рухоллы Хомейни «Велаят-э-факих»**

*Галстян Шушанна А.*

*Ереванский государственный университет, факультет Востоковедения,  
кафедра Иранистики, аспирант (Ереван, РА)*

**Аннотация.** Концепция «Велаят-э факих» как форма шиитского исламского правления стала популярной после Исламской революции в Иране и является наиболее важным и доминирующим институтом в системе управления Исламской Республики Иран. Исламская революция стала радикальным и широкомасштабным изменением в иранском обществе, направленным на свержение шаха и установление новой системы правления, основанной как на шариате, так и на гражданском праве. После Исламской революции 1979 года в Иране политическое, экономическое и культурное будущее государства определялось шиитским духовенством. Аятолла Рухолла Хомейни создал социальное общество, основанное на исламских религиозных принципах, и разработал теорию развития государства. После победы исламской революции Аятолла Рухолла Хомейни выдвинул теорию защиты «исламской власти» как религиозного приоритета, тем самым укрепив основы религиозного государства. Концепция «Велаят-э факих» дала возможность разрешить кризис легитимной государственной власти в шиизме. Она закреплена в Конституции Исламской Республики Иран, является основой государственного устройства страны и имеет самую тесную связь и сходство с системой имамата.

**Ключевые слова:** «Велаят-э факих», концепция, Хомейни, Исламская революция, Исламская Республика Иран, Конституция, Имамат, государственное устройство

**An overview of Ayatollah Ruhollah Khomeini's concept of "Velāyat-e faqih"**

*Galstyan Shushanna H.*

*Yerevan State University, Faculty of Oriental Studies,  
Department of Iranian Studies, PhD student (Yerevan, RA)*

**Abstract.** The concept of 'Velāyat-e faqih' as a form of Shia Islamic rule became popular after the Islamic revolution in Iran and is the most important and dominant institution in the system of governance of the Islamic Republic of Iran. The Islamic revolution was a radical and far-reaching change in Iranian society, aimed at overthrowing the Shah and establishing a new system of government based on both Sharia and civil law. The political, economic, and cultural future of the state was determined by Shia clergy after the 1979 Islamic Revolution in Iran. Ayatollah Ruhollah Khomeini established a social society based on Islamic religious principles and developed a theory of state development. After the victory of the Islamic revolution, Ayatollah Ruhollah Khomeini put forward the theory of defending "Islamic power" as a religious priority, thereby strengthening the foundations of the religious state. The concept of 'velayat-e faqih' was an opportunity for a solution to the crisis of legitimate state authority in Shi'ism. It has enshrined in the Constitution of the Islamic Republic of Iran and is the basis of the state structure of the country and has the closest connection and similarity with the Imamate system.

**Keywords:** "Velāyat-e faqih", the concept, Khomeini, Islamic revolution, Islamic Republic of Iran, Constitution, Imamate, state structure

Իրանում 1979 թվականին տեղի ունեցած Իսլամական հեղափոխությամբ տապալվեց հազարամյակներ գոյություն ունեցած միապետությունը և հաստատվեց Աստվածապետական

հանրապետություն: Իշխանության եկավ Այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնին և երկրում

հաստատվեց «Վելայաթ-ե ֆադիհի»<sup>1</sup> («Ֆադիհի իշխանություն») հայեցակարգը: Այս քաղաքական-իրավական հայեցակարգն անվանող տերմինը նոր չէ, այն շիաների մոտ հայտնվել է դարեր առաջ և ենթադրում է «Մեծ թաքուցման»<sup>2</sup> ժամանակաշրջանում իսլամական աստվածաբանների հեղինակությամբ առաջնորդվելու անհրաժեշտությունը:

Հարկ է նշել, որ մինչ այդ Իրանի շահի իշխանությունը ոչ միայն քաղաքական էր, այլև հոգևոր: Որպես շիաների հոգևոր առաջնորդ՝ նա համարվում էր «թաքուցված» իմամի իրավահաջորդը և պետք է նրան հանձնեք իշխանությունը, երբ նա գար: Սկզբունքայնորեն կարևոր էր համարվում տիրակալի ծագումը՝ նա պետք է սերեր 12 անբասիր իմամների տոհմից [8, էջ 203]: Այսինքն լեգիտիմ ղեկավար կարող էր լինել միայն «անբասիր» իմամը, որոնցից վերջինը թաքնվել էր և իրականացնում էր իր կառավարումը: Անհրաժեշտ էր քաղաքական ուսմունք, որտեղ պետության ղեկավարն օրենքով կներկայացներ «թաքուցված իմամի» իշխանությունը:

Շիայականության կարևոր հիմքերից մեկն իմամաթի և նրա ժառանգականության դրույթն է, ըստ որի շիայական համայնքին անհրաժեշտ է արդար առաջնորդ, ով կունենար համայնքի լիիրավ վստահությունը և կառաջնորդեր ամենայն պատասխանատվությամբ: «Այսինքն, իմամաթն Աստծո կողմից ընտրված աստվածային բնույթի և աստվածային օրենքների վրա հիմնված կառավարման ձև էր, իսկ իմամն՝ իշխանության կրող» [1, էջ 88]:

Իմամներն ու արդար ֆադիհները պարտավոր են՝ օգտագործելով իշխանությունն ու պետական մարմինները, կատարել Աստծո կամքը, հաստատել արդար իսլամական համակարգ և ծառայել ժողովրդին: Ֆադիհի իշխանությունը պարտականությունների կատարումն է [6, էջ 78]:

Իսլամական հեղափոխությունն արմատական և համատարած փոփոխություն էր իրանական հասարակության մեջ, որի նպատակն էր տապալել շահին և հիմնել կառավարման նոր համակարգ, որը հիմնված կլիներ և՛ շարիաթի, և՛

քաղաքացիական իրավունքի վրա: Իսկ ինչպես նշում է իրանագետ Երվանդ Աբրահամյանը՝ 1979 թվականի Իսլամական հեղափոխությունը բռնկվեց ոչ այս կամ այն քաղաքական սխալի պատճառով, այն հրաբխի պես ժայթքեց իրանական հասարակության մեջ տասնամյակների ընթացքում կուտակված հսկայական ճնշման պատճառով [11, էջ 155]:

«Վելայաթ-ե ֆադիհի» հայեցակարգում Խոմեյնին հնարավորություն տեսավ լուծելու շիայականությունում օրինական պետական իշխանության ճգնաժամը: Ուսմունքի իր մեկնաբանությունում՝ նա հենվում էր ինչպես շիայական դասական ավանդույթի, այնպես էլ ժամանակակից արևմտյան փիլիսոփայական և քաղաքական ուսմունքների վրա:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Այաթոլլահ Խոմեյնին<sup>3</sup> ֆադիհներից առաջինն էր, ում հաջողվեց ստեղծել Իսլամական պետություն: Նա ճանաչում էր «արդար» ֆադիհի բացարձակ իշխանությունը և անհրաժեշտ էր համարում ֆադիհին տալ մարգարեի և իմամների բոլոր իրավունքները: Նա կատարելագործել է կրոնի և իշխանության կապի տեսությունը շիայականությունում, ինչպես նաև իսլամական հեղափոխության գաղափարական հիմքն է դրել: Հեղափոխության հաղթանակից հետո, որպես կրոնական առաջնահերթություն առաջ քաշեց «իսլամական իշխանության» պաշտպանության տեսությունը, որով ամրապնդեց կրոնական պետության հիմքերը [10, էջ 86]:

Ըստ Խոմեյնիի՝ իսկական իսլամական կառավարությունը պետք է գլխավորեր բարձրաստիճան հոգևորականը (մարջայե թաղիդ)<sup>4</sup> կամ բարձրաստիճան հոգևորականների կոմիտեն (ֆուքահա)<sup>5</sup>: Այս դերը իշխող իրավաբանին (Վալի-ե ֆադիհին)<sup>6</sup> կտար նույն ժամանակային գործառույթը (բայց ոչ կարգավիճակը) ինչպես իմամներին: Իրավաբանը պատասխանատու կլինի «երկրի կառավարման և շարիաթի սուրբ օրենքների իրականացման համար» [11, էջ 62]:

<sup>1</sup> «Վելայաթ» թարգմանվում է որպես «իշխանություն», «կառավարում» կամ նույնիսկ «հովանավորություն»: Ֆադիհը մուսուլմանական իրավունքի մասնագետն է, մուսուլմանական իրավագետ-իրավաբան: Համապատասխանաբար «Վելայաթ-ե ֆադիհ» նշանակում է «մուսուլմանական իրավագետի իշխանություն»: «Վելայաթ-ե ֆադիհի» հայեցակարգը որպես շիայական իսլամական կառավարման տեսակ ժողովրդականություն է ձեռք բերել Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո:

<sup>2</sup> Ըստ շիաների՝ տասներկուերորդ իմամ Մահդին չի մահացել, այլ անհետացել է և վերադառնալու է: Անհետացման ժամանակաշրջանն անվանում են «Մեծ թաքուցման» ժամանակաշրջան:

<sup>3</sup> Խոմեյնին Դոմի հոգևոր ճեմարանի ֆադիհ էր և Այաթոլլահ Մուհամմադ Հոսեյն Բորուջերդիի մահից հետո դարձավ ճանաչված հեղինակություն (պարսկ. մարջա-ե թաղիդ), և նրա «Գործնական տրակտատը» (պարսկ. «Ռիսալայ-ե ամալի») աշխատությունը մեծ ժողովրդականություն էր վայելում շիաների շրջանում:

<sup>4</sup> Մարջայե թաղիդ բառացիորեն նշանակում է «ընդօրինակման աղբյուր»: Այս տիտղոսը շնորհվում է շիայականությունում ամենաբարձր աստիճանի հոգևորականին, ով իրավասու է հետևորդների համար որոշումներ կայացնել իսլամական օրենքի շրջանակներում:

<sup>5</sup> Իսլամական իրավունք մասին խորը գիտելիքներ ունեցող իրավաբաններ, բարձրաստիճան հոգևորականներ:

<sup>6</sup> Վալի-ե ֆադիհը իշխող ֆադիհն է, ում վստահված է իսլամական հասարակության կյանքին վերաբերող բոլոր հարցերի կառավարումը:

Վերը նշված հատկանիշները հնարավորություն տվեցին Խոմեյնիին համոզել Ղոմի մուջթահիդներին և ուլեմին իր գլխավորած հեղափոխության՝ կրոնի և քաղաքականության միասնությանը միտված ընթացքի ճշտության մեջ [10, էջ 88]:

Հոգևորականության հաջողությունները 1978-1979 թթ. հեղափոխության մեջ նշանավորվում են Խոմեյնիի ունեցած ակնառու դերով: Չնայած հոգևոր կոչմանը՝ Խոմեյնիին ներկայացավ նաև որպես հմուտ քաղաքական գործիչ: Խոմեյնիի շնորհիվ հոգևորականությունն ուներ հատակ մարտավարական և ռազմավարական ծրագիր, որը ենթադրում էր ավանդական շիայական ուսմունքի վերափոխում: Այս ծրագրի հիմքում ընկած էր «Վելայաթ-ե Ֆադիհի» սկզբունքը կամ շիաների առաջնորդության հատուկ առաքելությունը հանձնելու գերագույն առաջնորդ Խոմեյնիին, ում տրամադրվեցին աննախադեպ իրավունքներ՝ համայնքի բոլոր կենսական հարցերում՝ բարձր դասելով նրան օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններից [4, էջ 225]:

Հեղափոխությունից հետո հիմնական խնդիրը նոր Սահմանադրության մշակումն էր, որը պետք է փոխարիներ հիմնական օրենքներին: Սա հանգեցրեց փոքր-ինչ անհավասար պայքարի, մի կողմից Խոմեյնիի և նրա հետևորդների, ովքեր որոշեցին ինստիտուցիոնալացնել «Վելայաթ-ե Ֆադիհի» հայեցակարգը, իսկ մյուս կողմից՝ Մեհդի Բազարգանի՝ պաշտոնական վարչապետի և նրա լիբերալ կողմակիցների միջև, ովքեր ցանկանում էին ստեղծել Շառլ դը Գոլի Հինգերորդ Հանրապետության օրինակով Սահմանադրություն [11, էջ 162]:

Համաձայն իր ընդհանուր գաղափարական դիրքորոշումների, որոնք միավորում էին լիբերալ և իսլամական հայացքները, Բազարգանը հակված էր «դեմոկրատական իսլամական» կամ «իսլամական դեմոկրատական հանրապետության» ստեղծմանը: Խոմեյնիի համար անընդունելի էր հենց «դեմոկրատական» տերմինը, որի հետ նա կապում էր կառավարման արևմտյան համակարգերը [3, էջ 75]:

Վերջնական արդյունքը հիբրիդային էր՝ Խոմեյնիի վելայաթի և Բազարգանի Ֆրանսիական Հանրապետության, աստվածային իրավունքների և մարդու իրավունքների, հոգևոր իշխանության ու ժողովրդական ինքնիշխանության միջև [12, էջ 164]:

Խոմեյնիի ձեռքբերումն այն էր, որ նա կարողացավ համախմբել հանրապետական և իսլամական ուղղությունների ջատագովներին հեղափոխության նախապատրաստման ու իրականացման, ինչպես նաև իսլամական և հանրապետական հատկանիշներ ունեցող Սահմանադրության մշակման համար: Այս երկու

ուղղությունների միավորումը հիմք հանդիսացավ Իսլամական Հանրապետության օրինական ճանաչման համար: Ըստ Խոմեյնիի՝ միայն իսլամը կարող էր ամուր հիմքեր ստեղծել իսկապես արդար պետության համար: Իսլամի էությունը չի սահմանափակվում բարոյական և էթիկական օրենսգրքով, որին կարելի է հետևել կամ չհետևել՝ կախված հանգամանքներից: Իսլամը կարգավորում է մարդկային կյանքի բոլոր ոլորտները, և շատ գրվածքներ վերաբերում են մուսուլմանական համայնքի կյանքի հասարակական-քաղաքական կողմին [7, էջ 155]:

Խոմեյնիին պնդում էր, որ իրավաբանական կառավարության ստեղծումը «կազատի իսլամական երկրները իմպերիալիզմի ճիրաններից» և կվերականգնի արդարությունը իսլամական հասարակությունում [11, էջ 149]:

1979 թվականին ընդունված երկրի Սահմանադրությունում մտցվեց «համեմատաբար լայն լիազորություններ ունեցող ֆադիհի իշխանություն» սահմանումը: 1989 թվականին Իմամ Խոմեյնիի կյանքի վերջին տարում, իր իսկ առաջարկությամբ Սահմանադրությունը վերանայվեց, որից հետո «Ֆադիհի բացարձակ իշխանության» տեսությունը տեղ գտավ Սահմանադրությունում և երկրի պետական համակարգում [10, էջ 87]:

Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) Սահմանադրության մի շարք հոդվածներ<sup>7</sup> արտացոլում են առաջնորդին ներկայացվող պահանջները, իրավասությունները և այն որակները, որոնք նա պետք է ունենա: Սահմանադրության համաձայն՝ առաջնորդը պետք է ունենա ղեկավարի ակնառու որակներ, բանիմաց լինի մուսուլմանական իրավունքի սահմանումներում և հարցերում: Այս ղեկավարը երկրի ղեկավարը դառնում է ԻԻՀ մուսուլմանների առաջնորդը և կրում է դրա հետ կապված ողջ պատասխանատվությունը: ԻԻՀ-ում 12-րդ իմամի բացակայության ընթացքում հավատացյալների և իմամաթի գործերի կառավարումը իսլամական ուսմայում վստահված է արդար և բարեպաշտ ֆադիհին, ով պատասխանատու է Իմամաթի պահպանման և մուսուլմանական համայնքի ղեկավարման համար:

«Վալի-ե Ֆադիհի» պատասխանատվություն է ստանձնում այնպիսի կարևոր հարցերի համար, ինչպիսիք են՝ մուսուլմանական իրավագիտությունը, դատավճիռները, ֆեթվաների թողարկման ղեկավարումը, հավատացյալների գործերի կառավարումը, առաջնորդությունը [9, էջ 34]:

ԻԻՀ նախագահը և խորհրդարանի անդամներն ընտրվում են ժողովրդի կողմից, իսկ երկրի

<sup>7</sup> Հոդված՝ 5-րդ, 57-րդ, 60-րդ, 107-112-րդ, 113-րդ, 130-րդ, 131-րդ, 142-րդ, 175-րդ, 176-րդ, 177-րդ [2, էջեր 35, 60, 84-91, 98, 105, 119, 120-122, 122-124]

ղեկավարն ընտրվում է Փորձագետների խորհրդի կողմից, որի անդամները նույնպես ընտրվում են համաժողովրդական քվեարկությամբ: Առաջնորդը երկրի գերագույն ղեկավարն է, ում տրված լայն լիազորությունների հետ մեկտեղ վստահված են պետական բոլոր կառույցների նկատմամբ վերահսկողության գործառույթները [10, էջ 87]:

Այսպիսով, Խոմեյնին առաջ քաշեց «Վեյայաթ-ե Ֆադիհի» հայեցակարգ<sup>1</sup> որպես անհրաժեշտ հիմնավորում՝ մինչև «թաքուցված իմամի» ժամանումը բարձրագույն կրոնական հեղինակությունների կողմից իսլամական պետությունը կառավարելու համար [5, էջ 292]:

«Վեյայաթ-ե Ֆադիհի» ԻԻՀ կառավարման համակարգի ամենակարևոր և գերիշխող ինստիտուտն է, որը Սահմանադրության համաձայն շատ կարևոր դեր է խաղում քաղաքական իշխանության ուղղակի և անուղղակի իրականացման գործում: Այն հանդիսանում է ԻԻՀ պետական համակարգի հիմքը և ունի ամենամեծ առնչությունն ու նմանությունն իմամաթական համակարգի հետ [13]:

Ամփոփելով հոդվածը՝ եզրահանգում ենք հետևյալին.

➤ Խոմեյնին միավորեց քաղաքականությունն ու կրոնն ամուր ձևով: Հատկապես ակնառու է ԻԻՀ Սահմանադրությունում կրոնական և աշխարհիկ օրենքների միավորումը, որոնք շարադրված են հարմարեցված լինելով շիայականությանը:

Այսպես՝ Սահմանադրության 4-րդ հոդվածում նշվում է. «Քաղաքացիական, քրեական, ֆինանսական, տնտեսական, վարչական, մշակութային, ռազմական, քաղաքական և այդ կարգի բոլոր օրենքները պետք է հիմնված լինեն իսլամական նորմերի վրա: Այս սկզբունքը տարածվում է Սահմանադրության բոլոր հոդվածների, ինչպես նաև բոլոր օրենքների և նորմատիվ ակտերի վրա»:

➤ Խոմեյնիի «Վեյայաթ-ե Ֆադիհի» հայեցակարգում համեմատած դասական շիայականության հետ իմամաթի մասին տեսակետները փոփոխված են: Ֆադիհի՝ «թաքուցված իմամի» տեղապահի և իմամաթի պատասխանատուի անձնական հատկանիշները համարվում են իր՝ ընտրյալ լինելու պատճառը, ոչ թե հետևանքը: Ինքնին իմամի կոչումը, որը վերագրված էր Խոմեյնիին, համարվում էր ոչ այնքան կրոնական, որքան «Վեյայաթ-ե Ֆադիհի» սկզբունքն օրինականացնելու համար տերմին՝ սերտորեն կապելով այն իմամաթի հետ:

➤ Խոմեյնիի «Վեյայաթ-ե Ֆադիհի» հայեցակարգի ընդունումը կարելի է բնութագրել որպես ի պատասխան՝ 20-րդ դարում Իրանում տեղի ունեցած բարդ սոցիալական, քաղաքական և տնտեսական ճնշումներին: Իրանում տեղի

ունեցած սոցիալական ցնցումներն այն հիմնական գործոններից էին, որոնք առաջնորդեցին Խոմեյնիին և այլ շիա հոգևորականներին լուծելու երկրի սոցիալական և քաղաքական խնդիրները: Միապետության հետ կապված բոլոր խնդիրներից հետո, Խոմեյնին ի վերջո եկավ այն եզրակացության, որ միայն ֆադիհը կարող է կառավարել և պահպանել արդար կառավարություն և առաջնորդել ժողովրդին:

➤ 1979 թվականին Իրանում տեղի ունեցած Իսլամական հեղափոխության արդյունքում երկրում իշխանությունն անցավ շիա հոգևորականությանը, որը որոշեց պետության քաղաքական, տնտեսական և մշակութային հետագա կյանքը: Խոմեյնին կառուցեց սոցիալական հասարակություն՝ հիմնվելով իսլամական կրոնական սկզբունքների վրա, ստեղծեց պետության զարգացման այնպիսի տեսություն, որն այլընտրանք դարձավ արևմտյան ուսմունքներին:

➤ ԻԻՀ կառավարման վարչակարգը հիմնված լինելով «Վեյայաթ-ե Ֆադիհի» հայեցակարգի վրա՝ ենթադրվում էր, որ երկար չի զոյատևի, այլ որոշ ժամանակ անց կփլուզվի: Սակայն հեղափոխությունից 40 տարի անց էլ ԻԻՀ տարածաշրջանի ամենահզոր երկրներից մեկն է՝ չնայած միջազգային լայն մեկուսացմանը և իր նկատմամբ կիրառված պատժամիջոցներին:

### Օգտագործված գրականության ցանկ

1. **Ստամբուլյան Ա.**, Իմամ Խոմեյնու «Վեյայաթ-ե Ֆադիհի» հայեցակարգի կրոնական, պատմական և քաղաքական հիմքերը: // Արևելագիտության հարցեր, № 21. – Երևան, 2022:
2. **Բադայան Գ.** Թարգմանությամբ, Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն: – Թեհրան, 2005:
3. **Ագաև Ս. Ջ.**, Иран: рождение республики. – Москва, 1984.
4. **Дорошенко Е. А.**, Шиитское Духовенство в двух революциях: 1905-1911 и 1978-1979 гг. – Москва, 1998.
5. **Дружиловский С. Б.**, К вопросу о соотношении религиозного и светского факторов в общественно-политическом развитии Иранского государства, Исламский фактор в истории и современности. – Москва, 2011, с. 292
6. **Имам Хомейни**, Правление Факиха (Исламское Правление). – Тегеран, 2006.
7. **Корнеева Т. Г.**, Концепция «Исламского государства» Имама Хомейни, Ислам в современном мире. Том 13. № 2, 2017.
8. **Кулагин И. В.**, Шиитский ислам и имамат в современном Иране. // История философии, № 18, 2013.

9. **Манучахри А.**, Политическая система Ирана. – Санкт-Петербург, 2007.
10. **Санан М.**, Мусульманское право и политика. – Москва, 2004.
11. **Abrahamian E.**, On Khomeini's political thought see, Khomeinism: Essays on the Islamic Republic. Berkeley: University of California Press, 1993.
12. **Abrahamian E.**, A History of Modern Iran. – New York, 2008.
13. Jaaygaah-e Velaayat-e Faghih dar hoghoogh-e asaasi-e Jomhoori-e Eslaami-e Iraan (Վելայաթ-ն Փաղիհի

դիրքն Իրանի Իսլամական Հանրապետության հիմնական օրենքներում) <https://ensani.ir/fa/article/83887> (Դիտման ամսաթիվը: 03.06.2024).

*Сдана/Հանձնվել է՝ 04.06.2024*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 11.06.2024*

*Принята/Ընդունվել է՝ 18.06.2024*